ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

«22» 09 2021 թ.
№ 23/07-3436

ք. Երևան, Տերյան փող., 44, Հեռ.՝ (+374 11) 518 401
Էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«Ազուռ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը
/ք. Երևան, Նորքի 1-ին նրբանցք, տուն 5/

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

Երևանի քաղաքապետարանի և «Ազուռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի հունիսի 28-ին կնքվել է հ.ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/85-1 ապրանքի մատակարարման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքներ, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Գնորդի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ազուռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ընդհանրապես չեն մատակարարվել Պայմանագրով նախատեսված ապրանքները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետով, միակողմանի լուծում է «Ազուռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի հունիսի 28-ին կնքված հ.ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/85-1 ապրանքի մատակարարման պայմանագիրը:

ԱՎԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրավաբանական բաժին.
Կատարող՝ Ա. Մարտիրոսյան
☎ 011-518-419 E-Mail: kentronirav@mail.ru